

Հայաստանի Կենսաբազմազանության պահպանման օրակարգը COP 17-ին ընդառաջ

Ինգա Զարաֆյան, Վիկտորյա Բուռնազյան



Համառոտագիր

2026թ. հոկտեմբերին Հայաստանը կհյուրընկալի ՄԱԿ-ի կենսաբազմազանության կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը՝ COP 17-ը: Սա պատմական իրադարձություն է, երբ կքննարկվեն Կունմին-Մոնրեալի շրջանակի «Գլոբալ վերանայման» (Global Review) մեխանիզմների վերաբերյալ:

Այս նպատակով Հայաստանը մշակել է Ազգային ռազմավարություն և գործողությունների պլան՝ ուղղված գլոբալ նպատակի իրականացմանը՝ մինչև 2030 թ-ն ապահովել Երկիր մոլորակի ցամաքային և քաղցրահամ ջրային էկոհամակարգերի առնվազն 30%-ի արդյունավետ պահպանումը: Այս նպատակին հասնելու ճանապարհին Հայաստանը բախվում է բազմաթիվ մարտահրավերների՝ հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտների բիզնեսի շահերի բախման, անտառի և այլ կենսառեսուրսների վերաբերյալ վստահելի տվյալների բացակայության, գենետիկ ռեսուրսների անբավարար վերահսկողության:

Հոդվածում ուսումնասիրվել են Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները: Վերլուծվել է հանքարդյունաբերության, փոքր ՀԷԿ-երի և անտառահատումների ազդեցությունը էկոհամակարգերի վրա, ընդգծվել են օրենսդրական բացերն ու քաղաքական կամքի անհրաժեշտությունը կենսաբազմազանության պահպանության համար:

Այս հոդվածում արտահայտված մտքերը հեղինակինն են և չեն արտահայտում Հայերիի Բյուր հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետը:

*Լուսանկարները՝ ԷԿՈԼՈՒՐ տեղեկատվական ՀԿ
Շապիկի լուսանկարը՝ Գեղանուշի պոչամբար, Սյունիքի մարզ*

Բովանդակություն

Հայաստանը՝ COP 17-ը հյուրընկալող երկիր	4
Միջազգային իրավական շրջանակը և Հայաստանը	5
Հայաստանի հարուստ, բայց վտանգված կենսաբազմազանությունը	7
«30x30» թիրախը և Հայաստանի հանձնառությունը	10
Հայաստանի անտառները՝ կենսաբազմազանության միջավայրի տեսանկյունից	14
Փոքր հիդրոէներգետիկայի ոլորտի ազդեցությունը կենսաբազմազանության վրա	19
Եզրակացություն	21

Հայաստանը՝ COP 17-ը հյուրընկալող երկիր

2026թ. հոկտեմբերի 19-30-ը Հայաստանը կհյուրընկալի¹ ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը (COP 17): COP 17-ի անցկացման երկրի ընտրությունը կատարվել է 2024թ. Կոլումբիայի Կալի քաղաքում ընթացող «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի COP16-ի մասնակից երկրների քվերակության արդյունքում:

Կողմերի համաժողովը (COP) Կոնվենցիայի կառավարող մարմինն է և նպաստում է Կոնվենցիայի իրականացմանը՝ իր պարբերական նիստերում կայացվող որոշումների միջոցով: Երևանյան COP-ի կենտրոնական իրադարձությունը կլինի «Գլոբալ վերանայումը» Երկրները կվերանայեն կենսաբազմազանության պահպանմանն ու կայուն օգտագործմանն ուղղված իրենց գործողությունները՝ պարզելու դրանց արդյունավետությունը, բացերն ու գնահատելու առաջընթացը: Այս աշխատանքի համար հիմք են ընդունվելու կողմ երկրների ներկայացրած կոնվենցիայի իրականացման իրենց ազգային զեկույցները: Այս նպատակով Հայաստանն այժմ մշակում է ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի իրականացման Հայաստանի Հանրապետության 7-րդ ազգային զեկույցը:

1 | Decision adopted by the Conference of the Parties to the Convention on Biological Diversity on 1 November 2024 (<https://www.cbd.int/doc/decisions/cop-16/cop-16-dec-27-en.pdf>)

*CoP17-ի պաշտոնական տարբերանշանը՝
Երևանյան կապտաթիթեռ*



Միջազգային իրավական շրջանակը և Հայաստանը

ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան ուժի մեջ է մտել 1993թ. դեկտեմբերի 29-ին: Նույն թվականին Հայաստանը միացել է կոնվենցիային՝ պարտավորվելով կատարել դրա հիմնական պահանջները, մասնավորապես՝ ոլորտը կարգավորող օրենսդրության, բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, կենսաբազմազանության պահպանման և կենսառեսուրսների կայուն օգտագործման, ինչպես նաև գենետիկական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ:

2004թ. մարտի 16-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ վավերացվել է Կոնվենցիայի Կարթագենայի արձանագրությունը², որն ապահովում

2 | <https://www.arlis.am/hy/acts/4179>



Ոսկու ֆաբրիկայի տարածք՝ Լոռու մարզում

է գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների (ԳՄՕ) անվտանգ մշակումը, տեղափոխումը և օգտագործումը, որոնք կարող են ունենալ բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը վերաբերող ռիսկերը:

Կոնվենցիայի Նագոյայի արձանագրությունն ապահովում է գենետիկական ռեսուրսների օգտագործումից առաջացող օգուտների արդար և հավասար բաշխումը: ՀՀ կառավարությունը 2025թ. դեկտեմբերի 18-ի նիստում ընդունեց այն վավերացնելու որոշում³: Հատուկ ուշադրության է արժանի COP 15-ի ժամանակ ընդունված Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակը, որում սահմանված է 4 նպատակ 2050թ. համար և 23 թիրախ 2030թ. համար: Նպատակներն են՝ 1) Պաշտպանել և վերականգնել, 2) Բարգավաճել բնության հետ ներդաշնակ 3) Արդարացիորեն բաշխել օգուտները, 4) Ներդնել և համագործակցել: Շրջանակի 23 թիրախներից 1-8-ն ուղղված են կենսաբազմազանության համար սպառնալիքների կրճատմանը, 9-13-ը՝ մարդկանց կարիքների բավարարմանը կենսաբազմազանության կայուն օգտագործման և օգուտների բաշխման միջոցով, 14-23-ն ուղղված են իրականացման և ներդրման համար գործիքներին և լուծումներին:

3 | <https://e-gov.am/gov-decrees/item/45741/>

Հայաստանի հարուստ, բայց վտանգված կենսաբազմազանությունը

Հայաստանը, լինելով Կովկասի տարածաշրջանի մաս, ճանաչված է որպես աշխարհի կենսաբազմազանության 36 թեժ կետերից մեկը, որն ունի ամենահարուստ, միաժամանակ վտանգված կենսաբազմազանություն: Այն գտնվում է երեք կենսաաշխարհագրական շրջանների հատման վայրում: Կլիմայական պայմանների զանազանությունը և երկրաբանական ակտիվ գործընթացները հանգեցրել են տարբեր էկոհամակարգերի և բարձր աստիճանի էնդեմիզմ ունեցող հարուստ կենսաբազմազանության առաջացմանը:

Երկիրը շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսերի աճելավայր է, որոնցից 142 տեսակ կամ 3.8%-ն էնդեմիկ տեսակներ են: Հայաստանը վայրի ցորենի հայրենիքն է:



Կոտակված լցակայանների տարածք՝ Սյունիքի մարզում

Վայրի հացահատիկների գենետիկական հնագույն ֆոնդը պահպանելու համար 1981 թվականին Երևանի մոտակայքում ստեղծվել է «Էրեբունի» արգելոցը: Ներկայում արգելոցի տարածքը կազմում է 119 հեկտար, որտեղ աճում է գիտությանը հայտնի վայրի ցորենի չորս տեսակներից երեքը՝ ցորեն ուրարտու (*Triticum urartu*), ցորեն բեոտական (*Triticum boeoticum*), ցորեն արարատյան (*Triticum araraticum*): Հայաստանում աճում է նաև մշակովի ցորենի 10 տեսակ, որոնք ներառում են մոտ 230 սորտ⁴:

Չնայած այս ամենին Հայաստանի բուսական աշխարհը վտանգված է: Մի շարք տեսակներ գտնվում են կրիտիկական վիճակում կամ անհետացման եզրին: 2010թ. հրատարակված ՀՀ բույսերի Կարմիր գրքում ընդգրկված է անոթավոր բույսերի 452 տեսակ կամ 11.89%, մսկերի 40 տեսակ կամ 1.05%: Ըստ Բնության պահպանության միջազգային միության՝ IUCN չափորոշիչների՝ կրիտիկական վիճակում է գտնվում 143 տեսակ, վտանգված՝ 249 տեսակ, խոցելի տեսակ՝ 60, անհետացման վիճակին մոտ գտնվող՝ 21 տեսակ⁵:

Հայաստանի կենդանական աշխարհը ևս աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով՝ 495 տեսակ՝ ֆաունայի շուրջ 3%-ը, որոնց գերակշռող մասը պատկանում են անողնաշարավոր կենդանիներին: ՀՀ կենդանիների

4 | В. О. ГУЛКАНЯН, НИКОЛАЙ ИВАНОВИЧ ВАВИЛОВ И РАЗВИТИЕ БИОЛОГИЧЕСКОЙ НАУКИ В АРМЯНСКОЙ ССР, https://arar.sci.am/Content/230089/file_0.pdf

5 | Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարություն, ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի կիստի N 54 արձանագրային որոշում (<https://www.irtekam/views/act.aspx?aid=84527&m=%27%27&sc=%20>)



Հայաստանի անտառներ

Կարմիր գրքում ընդգրկվել են անողնաշար կենդանիների 155 և ողնաշարավոր կենդանիների 153 տեսակ:⁶ 2029թ. նախատեսվում է վերահրատարակել ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գիրքը:

6 | Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարություն, ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի կիստի N 54 արձանագրային որոշում (<https://www.irtek.am/views/act.aspx?aid=84527&m=%27%27&sc=%20>)



Կովկասյան ազնվացեղ եղջերուն «Դիլիջան» ազգային պարկում

«30x30» թիրախը և Հայաստանի հանձնառությունը

Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ ջրջանակի 3-րդ րդ թիրախի համաձայն՝ մինչև 2030 թ-ը պետք է ապահովվի երկիր մոլորակի ցամաքային և քաղցրահամ ջրային էկոհամակարգերի առնվազն 30%-ի արդյունավետ պահպանումը:

Կոնվենցիայի կողմ երկրները պարտավորություն են ստանձնել իրենց երկրներում ևս հասնել տարածքի 30 %-ի պահպանության:

Հայաստանը 2025թ. մշակել է «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության 2025-2030թթ. ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը:⁷ Նախագծով այս թիրախին հասնելու համար նախատեսվում է ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) ցանցը՝ առնվազն հասցնելով ՀՀ տարածքի 16,6%-ի:

7 | <https://www.e-draft.am/projects/9027/about>




«Սևան» ազգային պարկ,
Սևանա լիճ

Նշենք, որ ներկայում ՀՀ ԲՀՊՏ-ները կազմում են երկրի տարածքի ընդամենը 13.1%-ը: Հայաստանի ԲՀՊՏ-ները ներառում են 3 պետական արգելոց՝ «Խոսրովի անտառ», «Շիկահող» և «Էրեբունի», 4 ազգային պարկ՝ «Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» և «Արևիք», 232 բնության հուշարձան և 27 պետական արգելավայր⁸:

8 | <http://env.am/shrjaka-mijavayr/yndhanur-teghekutyuner>

Նախանշված թիրախին հասնելու համար նախատեսվում է Վայոց ձորի մարզում հիմնել «Զերմուկ, իսկ Սյունիքի մարզում՝ «Տաթև» ազգային պարկեր:

Հայաստանը նաև էմերալդ ցանցի թեկնածու տարածքներն է հաշվի առնելու, որոնց սահմանները դեռ վերջնական որոշված չեն: 2023թ. «EU4Environment» տարածաշրջանային ծրագրի շրջանակում իրականացվել են էմերալդ ցանցի վերանայման գիտական աշխատանքներ, ինչի արդյունքում առաջարկվել է թեկնածու տարածքների սահմանները 1.033.719,5 հեկտարից կրճատել՝ հասցնելով 707,7 հազար հեկտարի, 23 էմերալդ թեկնածու տարածքների փոխարեն՝ 30 էմերալդ թեկնածու տարածք: Այս տարբերակից դուրս են մնացել կենսաբազմազանու-



Կովկասյան ազնվացեղ եղջերուները բաց թողնվեցին բնություն

թյամբ հարուստ տարածքներ, օրինակ, այն հատվածներում, որտեղ նախատեսված է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործումը (Ջերմուկ խոշորացված համայնքի տարածքում): 2025թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիայի (Բեռնի կոնվենցիա) քարտուղարությունն չի ներկայացրել պաշտոնական առաջարկություն Էմերալդ թեկնածու տարածքների կրճատման վերաբերյալ:

Հայաստանը նախատեսում է ստեղծել առնվազն 1 կենսոլորտային պահպանավայր: Աշխատանքներ են տարվում Դիլիջանում կենսոլորտային արգելոցի ստեղծման ուղղությամբ:

Այլ արդյունավետ տարածքային բնապահպանական միջոցառումներ» (OECD) ընդգրկող տարածքները ներկայում կազմում են երկրի ընդհանուր տարածքի 4.1%-ը: Նախատեսվում է մինչև 2030թ. այս ցուցանիշը հասցնել 13.3%-ի

Հայաստանի կենսաբազմազանության վրա ազդող գործոնները

Կենսաբազմազանության վրա բացասական ճնշումը պայմանավորված է ինչպես կլիմայի փոփոխությամբ, անապատացման ակտիվ գործընթացներով, այնպես էլ մարդու գործունեությամբ, այդ թվում հանքարդյունաբերություն, հիդրոէներգետիկա, անտառտահատումներ, քաղաքաշինություն, գյուղատնտեսություն, զբոսաշրջություն, վերջին տարիներին նաև ռազմական ագրեսիա: Արդյունքում դիտվում է կենսաբազմազանության բնակմիջավայրի կորուստ, օտարածին տեսակների ներթափանցում, շրջակա միջավայրի աղտոտում, էկոհամակարգերի կրճատում, էկոհամակարգերի դեգրադացում, էկոհավասարակշռությունների խախտում:

Ռազմական ագրեսիայի ազդեցությունը կենսաբազմազանության վրա

2020թ. 44-օրյա դարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանն օկուպացրել է Հայաստանի որոշ տարածքներ, այդ թվում՝ ամենախիստ պահպանության ռեժիմն ունեցող «Շիկահող» արգելոցի մի հատվածը: «Ջետք» ինտրնետային թերթը «Ադրբեջանը «Շիկահող»-ի արգելոցում 60 հա անտառ է հատել. պետական մարմինները լռում են» հոդվածում⁹ գրել է «Շիկահող» արգելոցում ադրբեջանական դիրքերի, ամրաշինական աշխատանքների և ճանապարհների բացման համար ադրբեջանական կողմի իրականացրած անտառահատումների մասին: Տարածաշրջանային կենսաբազմազանության պահպանման շուրջ բանակցությունների և համագործակցության բացակայության պայմաններում ոչնչացվել է տեղի հարուստ կենսաբազմազանությունը: Պաշտոնական Երևանը մտադիր է հարցը լուծել սահմանազատման գործընթացով:

9 | «Ադրբեջանը Շիկահողի արգելոցում 60 հա անտառ է հատել. պետական մարմինները լռում են», <https://hetq.am/hy/article/174353>



Փոքր ՋԷԿ Լոռու մարզում

Հայաստանի անտառները՝ կենսաբազմազանության միջավայրի տեսանկյունից

Հայաստանը սակավանտառ երկիր է: ՀՀ անտառային պետական ֆոնդն ամենավերջին՝ 1993թ. հաշվառման արդյունքներով կազմում է երկրի տարածքի մոտ 11.2%-ը՝ 460.000 հեկտար, որից 334.100 հեկտարն անտառածածկ տարածքներն են (այս թվերը չեն ներառում անտառային տարածքների փոփոխությունները հետագա տարիներին):

«Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման մասին» որոշման նախագծի¹⁰ համաձայն՝ 2023թ. Հայաստանում անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում համատեղ ծառածածկ տարածքները կազմել են 382 109,06 հա: Անտառային հողերում ծառածածկը կազմել է 289 081.68 հա, իսկ բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ 93 027.38 հա:

10 | «Քաղաքացիական հասարակության կողմից ՀՀ-ի իրականացման մոնիթորինգի ուժեղացում (ՀՀ-ի 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի, 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերի մշտադիտարկում)» զեկույց, <https://www.e-draft.am/projects/6427/about>

Հայաստանի անտառները ենթարկվում են մարդածին և բնական ճնշումների: Ապօրինի և սանիտարական հատումների, արդյունքում բարձրաժեք անտառներին փոխարինել են կոճղաշիվային անտառները: Անտառային տարածքները ենթարկվում են դեգրադացման:

Հայաստանը 2021-2030թթ. ազգային մակարդակով սահմանված գործողություններով¹¹ նախատեսել է հանրապետության անտառածածկը հասցնել 12.9 %-ի՝ անտառածածկն ավելացնել 50,000 հա-ով: Այս ցուցանիշը բերված է նաև երկրի նոր մշակած կենսաբազմազանության ռազմավարության նախագծի գործողությունների ծրագրում:

11 | «ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 22-ի 610 – Լ որոշում, <https://e-gov.am/gov-decrees/item/36064/>

ԵՄ աջակցությամբ պատրաստված «Քաղաքացիական հասարակության կողմից ՀՀ-ի իրականացման մոնիթորինգի ուժեղացում (ՀՀ-ի

52-րդ հոդվածի «a» և «b» կետերի, 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերի մշտադիտարկում)» զեկույցի¹² համաձայն՝ նախատեսված 50,000 հեկտար նոր անտառից 2021- 2024թթ. տնկվել է մոտ 1,64%-ը: Նույն ժամանահատվածում հրդեհված անտառածածկ տարածքի մակերեսը գերազանցել է վերականգնված անտառների մակերեսը: Զեկույցի հրապարակումից հետո հրապարակվել է «Յետք» ինտերնետային թերթի «Անտառներ՝ թղթի վրա. ինչպես փոշիացնել գումարները»¹³ հետաքննությունը, որում ներկայացված նոր տնկված անտառների տարածքներ դաշտային այցելությունների արդյունքները այն մասին են, որ տվյալ տարածքներում անտառ գոյություն չունի:

12 | <https://cepacso.am/hy/report/48>

13 | «Անտառներ՝ թղթի վրա. ինչպես փոշիացնել գումարները», <https://hetq.am/hy/article/177458>

Նման իրավիճակում Հայաստանը չի կարողանա հասնել տարբեր միջազգային փաստաթղթերի շրջանակներում սահմանած իր թիրախին մինչև 2030թ-ը անտառածածկն ավելացնել 50 000 հա-ով:

Տնտեսական գործունեության համար հողերի կատեգորիայի փոփոխություն

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը տարեցտարի ավելանում են: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2025թ. տարեգրքի՝ 2020-2023թթ. ընթացքում այս կարգի հողերի մակերեսը 38.6 հազար հա-ից հասել է 39.9 հազար հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերինը 13.7 հազար հա-ից դարձել է 14.3 հազար հա, բնակավայրերի հողերը՝ 151.9 հազար հա-ից 152.5 հազար հա: Փոխարենը կրճատվել են գյուղատնտեսական նշանակության հողերը 2020թ. 2 043.5 հազար հա-ից 2023թ-ին մինչև 2 041.4 հազար հա, անտառային հողերը՝ 334.0 հազար հա-ից 333.8 հազար հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 335.6 հազար հա-ից 335.5 հազար հա, հատուկ նշանակության հողերը՝ 30.5 հազար հա-ից 30.4 հազար հա:¹⁴

14 | ՀՀ վիճակագրական կոմիտեի 2025թ. տարեգրք, <https://armstat.am/file/doc/99563678.pdf>

Հանքարդյունաբերության ազդեցությունը Հայաստանի կենսաբազմազանության վրա

Հայաստանում շահագործվում են մետաղական և ոչ մետաղական հանքեր: Հանքարդյունաբերության պատճառով առաջացող խնդիրներն են՝ հողային ծածկույթի խախտում և դեգրադացում, հանքարդյունաբերական գործունեության նպատակով անտառահատումներ, թափոնների և մակաբացման ապարների կուտակումների արդյունքում շրջակա միջավայրի աղտոտում, հազարավոր հեկտարներով բուսական և կենդանական պոպուլյացիաների արյալների մասնատում, կենդանիների միգրացիոն ուղիների խախտում, ՀՀ կարմիր գրքում գրանցված հազվագյուտ տեսակների գոյատևման սպառնում:

Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման ազդեցություն

ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի թիվ 1278-Ն որոշմամբ թույլատրվել է ՀՀ Լոռու մարզի գյուղական համայնքների վարչական սահմաններում, ինչպես նաև վարչական սահմաններից դուրս գտնվող



*Տրքսիկ լցակայանը՝
Ստեփանավանի հարևանությամբ*

շուրջ 357 հեկտար անտառային ծածկույթի հատում: Որպես փոխհատուցում պետք է տնկվեր 714 հա անտառ: 315 հա անտառի տնկում վերապահվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, որը պատշաճ չի կատարել, արդյունքում 315 տարածքում նոր անտառ գոյություն չունի:

Անտառապատման համար ազատ հողատարածքների բացակայության հիմնավորմամբ «Թեղուտ» ՓԲԸ-ին թույլատրվել է 714 հեկտար ընդհանուր մակերեսով անտառապատման համար նախատեսված տարածքից 180 հա տարածքում՝ Շնող և Թեղուտ համայնքներում, պտղատու այգիներ հիմնել: Ակնհայտ է, որ այգիները չեն կարող կատարել անտառի ֆունկցիա: Արդյունքում հանքարդյունաբերական գործունեության համար ոչնչացվել է հարուստ կենսաբազմազանությամբ անտառային էկոհամակարգ:

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների շահագործման ծրագիր

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը գտնվում է կենսաբազմազանության կարևոր տարածքներից մեկում: Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի մասնագիտական կարծիքի համաձայն՝ Ամուլսար կազմակերպած դաշտային ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են ՀՀ կարմիր գրքում գրանցված սողունների երեք տեսակ, թռչունների 15 տեսակ և կաթնասունների երկու տեսակ¹⁵:

Ամուլսարի հանքավայրի շահագործման ծրագրի տարածքը ներառում է էմերալդ թեկնածու տարածքներ: Այս կապակցությամբ քաղաքացիական հասարակության մի քանի կազմակերպություններ բողոք են ներկայացրել Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն¹⁶:

Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողովը 2025թ. դեկտեմբերի 8-12-ին կայացած 45-րդ հանդիպման ժամանակ Ամուլսարի ծրագրի վերաբերյալ խիստ մտահոգություն է հայտնել Ամուլսարի ոսկու հանքի շինարարության առաջխաղացման և ոսկու հանքաքարի անխուսա-

15 | Մասնագիտական կարծիք Հայաստանի Հանրապետությունում Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը ծրագրի ՇՄԱԳ-ում և դրա հավելվածներում ներկայացվող կենսաբազմազանության, նրա պահպանման և կենսաբազմազանության փոխհատուցման վերաբերյալ, <https://www.ecolur.org/files/uploads/2018/Amulsar%20expers%20opinions%202018/karenmanvelyan.pdf>

16 | <https://www.ecolur.org/files/uploads/2020/Complaint%20to%20Bern%20convention/complaintformenarmenia2020withannex.pdf>

փելի արդյունահանման վերաբերյալ, որը հակասում է 43-րդ և 44-րդ մշտական հանձնաժողովների որոշումներին և առաջարկել է ՀՀ իշխանություններին ապահովել, որ Ամուլսարի Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) լիովին համապատասխանեցվի արդի գիտական տեղեկատվությանը¹⁷:

17 | LIST OF DECISIONS AND ADOPTED TEXTS, CONVENTION ON THE CONSERVATION OF EUROPEAN WILDLIFE AND NATURAL HABITATS Standing Committee 45th meeting Strasbourg, 8-12 December 2025 Strasbourg, <https://rm.coe.int/misc-e-2025-45-standing-committee-clean-final/488029d956>

Փոքր հիդրոէներգետիկայի ոլորտի ազդեցությունը կենսաբազմազանության վրա

Հայաստանում 2025թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ շահագործման լիցենզիա ունի 191 փոքր ՀԷԿ՝ 403 908,1 ԿՎտ հզորությամբ և 949,6 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար առաքմամբ: Փոքր ՀԷԿ-երի կառուցումը հանգեցրել է կենսաբազմազանության կորստի: Մասնավորապես, ՄԱՁԾ/ԳԷՀ Փոքր դրամաշտորհների ծրագրի աջակցությամբ «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի իրականացրած «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» և «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՀԷԿ-երի բնագավառում ԲՀԿ կառավարություն երկխոսության միջոցով»



Փոքր ՀԷԿ՝ «Դիլիջան» ազգային պարկում

Ծրագրերի շրջանակներում փոքր ՅԷԿ-երի մշտադիտարկումից պարզ է դարձել, որ փոքր ՅԷԿ-երի ձկնանցարանների գերակշիռ մասը չունեն ֆունկցիոնալ նշանակություն, ձկնապաշտպան ցանց, չեն ապահովում բնապահպանական թողք, խախտում էն գետային էկոհամակարգերի հավասարակշռությունը, ոչնչացնում՝ ձկնաշխարհը: Ծրագրի փորձագիտական խումբը մշակել և պատասխանատու մարմիններին է ուղարկել փոքր ՅԷԿ-երի ոլորտի բարեփոխումների առաջարկություններ: Հաշվի առնելով ինչպես ներկայացված առաջարկությունները և ստեղծված իրավիճակը՝ ՀՀ-ում կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ: Այս փոփոխություններով սահմանվել են նոր փոքր ՅԷԿ-երի կառուցման նպատակով ՋԹ-ների տրամադրման մերժման դեպքերը, սահմանվել է գետերի ցանկը, որոնց վրա արգելվում է նոր փոքր ՅԷԿ-երի կառուցումը, փոքր ՅԷԿ-երի համար սահմանվել են ջրօգտագործման վճարներ, փոխվել է բնապահպանական թողքի հաշվարկի մեթոդաբանությունը: Դեռ չեն մշակվել գիտականորեն հիմնավորված հստակ չափորիշիչներ հիդրոհանգույցների, ձկնանցարանների, խողովակաշարերի և մնացած կառուցվածքների համար, որպեսզի դրանց ազդեցությունը բնական միջավայրին հասցվի նվազագույնի:

Եզրակացություն

Երևանում անցկացվելիք COP 17-ը Հայաստանի համար կարող է դառնալ ոչ միայն միջազգային ուշադրության կենտրոնում հայտնվելու հնարավորություն, այլև իրական քայլերի մեկնարկ՝ կենսաբազմազանության պահպանմանն ուղղված գործուն քայլերի համար: Կարևոր է, որ COP 17-ը նպաստի ինչպես Հայաստանի, այնպես էլ մյուս բոլոր երկրների կենսաբազմազանության պահպանման համակարգային բարեփոխումներին:

Քանի որ Հայաստանի առաջ կան շատ մարտահրավերներ, երկիրը պետք է կենտրոնացնի իր ջանքերը մարտահրավերները հաղթահարելու, օրենսդրական դաշտի բարեփոխման և կիրարկման գործում և այս աշխատանքում ներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին՝ այդ թվում քաղաքացիական հասարակությանը և համայնքներին՝ նրանց առաջարկելով մոտիվացիոն մեխանիզմներ:



Թխակապույտ աղավնին՝
Երևանյան շատրվանների մոտ

